ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի կարիքների համար օդորակիչների, հեռուստացույցների և փաստաթղթերի ոչնչացման սարքերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 18.11.2024թ. N 427/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.12.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Խանամիրյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Շ.Առաքելյանը, Հ.Վանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Խանամիրյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

-«ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունները և համակարգի միջոցով ներկայացրել է շտկված տարբերակը (կցվում է):

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ին և «Սմարթլայն» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ:
2. Հաշվի առնելով, որ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ չափաբաժիններով «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ի, 6-րդ չափաբաժնով «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

-1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ չափաբաժիններով «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

-6-րդ չափաբաժնով «Սմարթլայն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:
4. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակիցներ «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ին և «Սմարթլայն» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ից և «Սմարթլայն» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Խանամիրյան

Անդամներ՝ Շ.Առաքելյան

Հ.Վանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան